Գյուղատնտես

ՀՈԿՏԵՄԲԵՐ 15 - 28 2014 Թ. ԹԻՎ 27 (2049)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՎԵԼԱՑՆԵԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով Լոռու մարզում էր: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի և մի շարք այլ պաշտոնատար անձանց ուղեկցությամբ, նախագահն այցելել է Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկա, ծանոթացել իրականացված ներդրումներին, ֆաբրիկայի գործունեությանն ու զարգացման ծրագրերին: Շրջայցի ժամանակ նախագահին ներկայացվել է, որ նախկինում նույն վայրում եղել է տարածաշրջանի խոշորագույն թռչնաֆաբրիկաներից մեկը, որը 1988թ. ավերիչ երկրաշարժից հիմնովին ոչնչացել էր: Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկայի շինարարական աշխատանքները սկսվել են դեռևս մեկ տարի առաջ: Արդյունքում կառուցվել է ժամանակակից արտադրական հոսքագծերով թռչնաֆաբրիկա: Պատասխանատուների ներկայացմամբ, թռչնամսի արտադրությամբ մասնագիտացվող ընկերությունը բուծելու է համաշխարհային ճանաչում ունեցող մսատու թռչուններ:

Թռչնաբուծարանի շահագործումը հնարավորություն կընձեռի շուրջ 25 տոկոսով ավելացնելու թռչնամսի տեղական արտադրությունը, իսկ շրջակա բնակավայրերի գյուղատնտեսներին՝ իրացնելու իրենց հացահատիկային բերքը: Սպիտակի թռչնաֆաբրիկայում աշխատելու հնարավորություն կունենա 220 ընտանիք:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ տեղի է ունեցել ձկնաբուծության զարգացմանը նվիրված խորհրդակցություն, որին մասնակցել են ձկնաբուծական ընկերությունների ներկայացուցիչներ և շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարներ: Վարչապետը կարևորել է ձկնարտադրության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, քանի որ այս ճյուղն ունի արտահանման մեծ հնարավորություններ: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը զեկուցել է, որ ձկնարտադրության բնագավառում վերջին տարիներին պարբերաբար արձանագրվում է շուրջ 30 տոկոսի աճ, ինչը նպաստում է նաև արտահանման ծավալների ընդլայնմանը: Մասնավորապես, ընթացիկ տարվա առաջին 9 ամիսների ընթացքում արտահանումը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 30 տոկոսով: Նախարարի տեղեկացմամբ, հանրապետությունում ձկնարտադրությունը զարգացնելու համար առկա է մեծ ներուժ, և առաջիկայում ՄԱԿ-ի Արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպության օժանդակությամբ իրականացվելու է պիլոտային նոր ծրագիր՝ ոլորտում նոր համակարգ ներդնելու նպատակով:

Խորհրդակցությանը մասնակից ձկնարտադրողները վարչապետին են ներկայացրել իրենց առաջիկա ծրագրերն ու առկա խնդիրները, որոնք վերաբերել են ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրմանը, արտահանման ուղղությամբ պետական աջակցությանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ինչն էլ հնարավորություն կտա նվազեցնել ջրի կորուստը: Հովիկ Աբրահամյանը ողջունել է նոր ներդրումների իրականացման հարցում ընկերությունների պատրաստակամությունը և հայտնել կառավարության աջակցությունն առկա խնդիրների լուծման գործում:

ՀԱՅԱԳՐՈՖՈՐՈՒՄ

ԱՄԵՆԱՄՅԱ ԾՈՒԾԱՆԴԵՍ՝ «ArmProd EXPO»

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) Միությունը և LOGOS EXPO Center ցուցահանդեսային ընկերությունը կազմակերպել էին «ArmProd EXPO 2014» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 17-19 «Yerevan EXPO» ցուցահանդեսային համալիրում (Մերգելյան ինստիտուտի տարածքում): Ցուցահանդեսին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, կառավարության անդամներ, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, արտերկրյա հյուրեր: «Միջոցառումը գյուղի աշխատավորի, ագրովերամշակող արդյունաբերության ոլորտում ներգրավված աշխատակիցների քրտնաջան աշխատանքի, պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունք է: Մեկնարկող ցուցահանդեսի նպատակն է՝ գյուղատնտեսական արտադրության, գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության հնարավորությունների ցուցադրումը, սեփական արտադրանքի մրցունակության գնահատումը, առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկումը, արտահանման հնարավորությունների ընդլայնումը, գործարար կապերի հաստատումը, այցելուներին և հյուրերին բարձրորակ գյուղատնտեսական և պարենային ապրանքների ներկայացումը»,- ողջույնի խոսքում ասաց ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Մեծ հեղինակություն վայելող և ձևավորված ավանդույթներով հանրապետության խոշորագույն միջազգային սննդի «ArmProd EXPO» ցուցահանդեսը համարվում է տարվա գլխավոր իրադարձություններից մեկը, որին մասնակցում ե-ն ՀՀ և ԼՂՀ ավելի քան 75 ընկերություններ՝ սննդամթերքի և խմիչքների առաջատար արտադրողներ, մատակարարներ և դիստրիբյուտորներ:

↳3

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ներկայացուցչի տեղակալ, Հայաստանի Հանրապետությունում ՊԳԿ-ի ներկայացուցիչ Անտոնիո Ալոնզիին: Ողջունելով հյուրին՝ նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ այցը համընկել է Հայաստանում Գյուղատնտեսի և Պարենի համաշխարհային օրերի հետ, որոնց շրջանակներում տեղի են ունենում բազմաթիվ տոնական միջոցառումներ:

Հյուրի խնդրանքով նախարար Սերգո Կարապետյանը համառոտ ներկայացրել է գյուղատնտեսության բնագավառի ներկա վիճակը և համոզմունք հայտնել, որ տարեվերջին ոլորտում կգրանցվեն բարձր ցուցանիշներ: Նախարարը նաև շեշտել է, որ դրան նպաստել են նաև հանրապետությունում ՊԳԿ-ի կողմից իրականացվող ծրագրերը:

ՀՀ-ում ՊԳԿ-ի ներկայացուցիչ Անտոնիո Ալոնզին գոհունակություն է հայտնել Հայաստանում ընթացող ծրագրերի հաջողության ու արդյունավետության վերաբերյալ՝ շեշտելով, որ նա դիտում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը որպես գործընկերության լավագույն օրինակ:

Անտոնիո Ալոնզին նշել է, որ գյուղատնտեսության բնագավառում համաշխարհային զարգացումներն ունեն ոչ թե գյուղատնտեսական տարածքների ավելացման, այլ դրանց կայուն զարգացման, խնայողատար տեխնոլոգիաների կիրառման միտումներ: Նա նաև տեղեկացրել է, որ ՊԳԿ-ի առաջիկա ռազմավարական ուղղությունը՝ գյուղական վայրերի զարգացումն է, զբաղվածության աստիճանի ու եկամուտների բարձրացումը:

Այս տարվա Պարենի համաշխարհային օրվա խորագիրը՝ ընտանեկան ֆերմերային տնտեսությունների զարգացումն է: ՊԳԿ-ի ներկայացուցիչն ընդգծել է, որ տնտեսավարման այս ձևը լուրջ հաջողություններ ունի Հայաստանի Հանրապետությունում:

Նախարար Սերգո Կարապետյանն՝ անդրադառնալով Հայաստանում ընթացող ՊԳԿ-ի ծրագրերին, առաջարկել է ավելի ակտիվ գործունեություն ծավալել սպանդանոցների կառուցման և ձկնաբուծության մեջ օգտագործվող ջրի խնայողական ռեժիմների կիրառման հարցերում: Անտոնիո Ալոնզին պատրաստակամություն է հայտնել՝ հետամուտ լինել այդ խնդիրներին և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել դրանց լուծման ուղղությամբ:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԿԱՊԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին է ներկայացրել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նորանշանակ պետ Արմեն Հայրապետյանին: Նախարարը լիահույս է, որ կարճ ժամանակում համատեղ ուժերով կհաջողվի լուծել սննդի անվտանգության ոլորտում առկա խնդիրները:

«Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի միանալու մասին պայմանագիրը: Դրանով իսկ, Հայաստանի համար բացվում են նոր հեռանկարներ, և մեր առաջիկա խնդիրն է՝ ոչ միայն ավելացնել արտահանման ծավալները դեպի Ռուսաստան, այլև ամրապնդել գյուղատնտեսության ոլորտում առկա կապերը ԵՏՄ անդամ մյուս պետությունների հետ», - իր խոսքում նշել է նախարար Սերգո Կարապետյանը: ՀՀ գյուղատնտեսության նախարարն այնուհետև ամփոփել է Մոսկվա քաղաք կատարած իր այցն ու հորդորել է ակտիվ աշխատել ՌԴ-ում ՀՀ առևտրական ներկայացուցիչ Կարեն Ասոյանի հետ:

Խորհրդակցության ընթացքում նախարարը հանձնարարականներ է տվել բացատրական և խորհրդատվական աշխատանքներ կատարել հանրապետության գյուղացիական տնտեսությունների հետ, որպեսզի 2015 թվականին ավելանան բանջարեղենային և բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները, ինչպես նաև խաղողի սեղանի սորտի և պտղատու այգիների հիմնման ուղղությամբ: Նախարարը նաև տեղեկացրել է, որ ՌԴ անասնաբուժական և ֆիտոսանիտարական հսկողության դաշնային ծառայության ղեկավար Սերգեյ Դանկվերտի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ կենդանական ծագման մսամթերքի արտահանման արգելքի խնդրի լուծման ուղիները քննարկելու համար: Այդ նպատակով առաջիկայում Ռուսաստանի Դաշնություն կմեկնի ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Արմեն Հայրապետյանը՝ տեղում գործընկերոջ հետ խնդիրները քննարկելու համար: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են ոլորտում առկա մի շարք այլ հարցեր ևս:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Օրերս Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, «Հայագրոֆորում» համաժողովի շրջանակներում, տեղի ունեցավ «Մննդի անվտանգության հիմնախնդիրները և ներկա մարտահրավերները» խորագրով գիտաժողով:

Գիտաժողովին մասնակցության հայտեր էին ներկայացրել՝ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Եգիպտոսի, Ղազախստանի, Տաջիկստանի, Իրանի Իսլամական Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի տարբեր գիտակրթական կառույցներից՝ մոտ 190 հետազոտողներ: Գիտաժողովին մասնակցում էր նաև ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ներկայացուցչի տեղակալ և Հայաստանում ՊԳԿ ներկայացուցիչ Տոնի Ալոնզին:

Գիտաժողովի մասնակիցներին և հյուրերին ողջունեց ՀԱԱՀ-ի ռեկտոր Ա. Թարվերդյանը: Նա նշեց, որ ամենամյա գիտաժողովի նպատակն է՝ ներկայացնել և քննարկել ագրոպարենային համակարգի կարևոր հիմնախնդիրները: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռ. Մակարյանը: Փոխնախարարը, նախարար Ս. Կարապետյանի անունից, ողջունեց ներկաներին և մաղթեց բեղմնավոր աշխատանք: Մասնավորապես՝ Ռ. Մակարյանը նշեց, որ այսօր գիտաժողովի նպատակներից մեկն էլ՝ գիտական նորույթների քննարկումն ու ամփոփումն է, նոր և արդյունավետ մեթոդների վեր հանումը, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համագործակցության ամրապնդումը: Գիտաժողովի շրջանակներում քննարկվեցին պարենային ապահովվածության և սննդի անվտանգության խնդիրները՝ գիտության և տեխնիկայի առաջընթացը և սննդի անվտանգությունը, սննդի անվտանգության տնտեսական խնդիրները, նոր տեխնոլոգիաների օգտագործումն ու սննդի անվտանգության խնդիրները: Ներկա մարտահրավերներից արդիական են բնակչության պարենային ապահովվածության հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները:

Գիտաժողովի ընթացքում ՀԱԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանը ՀԱԱՀ-ի հետ ակտիվ ու բեղմնավոր համագործակցության համար Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Պատվավոր դոկտորի» կոչում է շնորհվել Կ.Ա. Տիմիրյազևի անվան ՌԴ պետական ագրարային համալսարանի ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ Վասիլի Իվանի Նեչաևին և Մոսկվայի Կ.Ի. Սկրյաբինի անվան անասնաբուժական բժշկագիտության և կենսատեխնոլոգիայի ակադեմիայի ռեկտոր, ՌԴ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ Ֆյոդոր Իվանի Վասիլևիչին, իսկ ՀԱԱՀ-ի հետ համագործակցության համար նրանք պարգևատրվել են ՀԱԱՀ-ի «Ոսկե հուշամեդալով»: Այնուհետև ՌԴ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ի.Ի. Կոչիշը Ագրարային կրթության միջազգային ակադեմիայի (որի անդամ են 140 երկրներ) դոկտորի կոչում շնորհեց ՀԱԱՀ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկան Ալբերտ Վիրաբի Վարդանյանին:

Մննդի անվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ զեկույցով հանդես եկավ պարենամթերքների տեխնոլոգիաների, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ բաժնի վարիչ Ա. Փեփոյանը: Հաջորդ զեկույցը, որի թեման Ագրարային կրթության առանձնահատկություններն ու անհրաժեշտությունն էր, ներկայացրեց ՌԴ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ. Ի. Նեչաևը:

Գիտաժողովի երկրորդ հատվածն անցկացվեց ՀԱԱՀ-ի առանձին մասնաշենքերում՝ բուսաբուծական մթերքներով պարենային ապահովվածության, էկոլոգիա և օրգանական գյուղատնտեսության, անասնաբուծական մթերքներով պարենային ապահովվածության, սննդի անվտանգության, պարենային ապահովվածության տնտեսագիտական վերլուծության, անասնաբուժության, գյուղատնտեսության մեքենայացման, հողաշինարարության և ջրային պաշարների կառավարման և հումանիտար գիտությունների թեմաներով:

Հաջորդ օրը տեղի ունեցավ գիտաժողովի լիագումար նիստը, որի ընթացքում բաժանմունքների ղեկավարները ներկայացրեցին իրենց հաղորդումները:

Լիանա Շախնազարյան

ՄԱՐԶԱՅԻՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը սեպտեմբերի 24-ին ընդունեց Ռումինիայից ժամանած պատվիրակությանը, որի կազմում էին Տուլչայի նահանգի խորհրդի փոխնախագահ Վասիլե Ստրատը, Դանուբի Դելտայի կենսոլորտի արգելոցի կառավարիչ Լուչիան Էդվարդ Սիմիոն, Հայաստանում Ռումինիայի դեսպանատան նախարար-խորհրդատու Վիտալի Վարատիչը և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ռաֆայել Պողոսյանը:



Քննարկվեցին Ռումինիայի Տուլչայի նահանգի և ՀՀ Տավուշի մարզի միջև փոխհամագործակցությանը վերաբերող հարցեր: Ողջունելով հյուրերին և երկու վարչատարածքային միավորներն ու համայնքները ներկայացնող տարածքային կառավարման մարմինների բարեկամանալու մտադրությունները, որոնք հիմնված են փոխադարձ հարգանքի և հանրային հետաքրքրություն ներկայացնող տարբեր ոլորտներում համագործակցության վրա: Մարզպետը ներկայացրեց Տավուշի մարզը, նրա աշխարհագրական դիրքի ու բնակչության մարզի զարգացման հիմնական ճյուղերը: Համոզված լինելով նոր հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտության մեջ՝ Տավուշի մարզպետը և Տուլչայի նահանգի խորհրդի փոխնախագահը հանդիպման վերջում ստորագրեցին համագործակցության համաձայնագիր, որով համաձայնության եկան մշակույթի, կրթության և գիտության, առողջապահության, տեղական ինքնակառավարման, բնապահպանության, տնտեսության և ներդրումների տարածքային կառավարման, սպորտի, զբոսաշրջության ոլորտներում համագործակցելու վերաբերյալ:

Այնուհետև Ռումինիայի քաղաքային համայնքների ղեկավարները մանրամասն ներկայացրին իրենց ղեկավարած համայնքները՝ նրանց զարգացման գործում շեշտադրելով նաև հայկական համայնքի դերակատարությունը: Ուշագրավ էր Գեռլայի քաղաքապետի տեղեկատվությունը, առաջին հայերն այստեղ բնակություն են հաստատել դեռևս 1700 թվականին և հիմնել առաջին անկախ քաղաքը՝ Արմենակապոլիսը: Այստեղ է կառուցված ամենամեծ հայկական եկեղեցին Եվրոպայում: Հայերն այստեղ դպրոց են կառուցել, բացել ծերանոց, որը մինչ օրս էլ գործում է: Քաղաքի ղեկավարությունը մտադիր է բարեկամանալ մարզկենտրոն Իջևանի հետ:

Զբոսաշրջության զարգացման հեռանկարներ ունի նաև Իջևանը: Այս հանդիպմանը հետևեց Իջևանի քաղաքապետարանում համագործակցության համաձայնագրի կնքումը Ռումինիայի Կլուժ նահանգի Գեռլա և ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքների միջև: Ի դեպ՝ երկու քաղաքների եղբայրացումն ամրագրված է դեռևս 2012թ.-ի հոկտեմբերի 28-ին՝ Գեռլայում: Հյուրերը բավականին տպավորված էին իջևանցիների ընդունելությամբ և հյուրասիրությամբ:

Տ. Նազինյան
Տավուշի ԳԱՄԿ

Ագրոլրատու
Հոկտեմբեր 15 - 28, 2014 թ.
թիվ 27 (2049)

1 ՀԱՅԱԳՐՈՖՈՐՈՒՄ

ԱՄԵՆԱՄՅԱ ԾՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ «ArmProd EXPO»

«Տարին բավականին բարեհաջող էր: Ավելացել է նաև մեզ հետ համագործակցող ֆերմերների թվաքանակը. նրանց, կայուն բերք ստանալու նպատակով, գարնանը տրամադրում ենք կանխավճար՝ թունանյութերի, պարարտանյութերի ձեռքբերման նպատակով: Ինչ վերաբերում է մթերված հումքի դիմաց վճարումներին, ապա այն գրեթե մոտենում է ավարտին»,-ասաց տնօրեն Արմեն Գասպարյանը:

«Բիոկաթ» ընկերությունը ներկայացրել էր 17 անուն կաթնամթերք՝ թթվասեր, կաթ, մածուն և այլն, որոնց պահանջարկը մեծ է սպառողների շրջանում: Ընկերությունն իր արտադրանքում օգտագործում է միայն բնական կաթ, որը մատակարարվում է Ալագյազի և Ապարանի գյուղացիական տնտեսություններից: «Առաջիկայում նախատեսել ենք արտադրել «Նեսկաֆե», որը հիմնականում առաքելու ենք ՌԴ: Որոշել ենք զբաղվել նաև ձիթապտղի արտադրությամբ»,- ասաց տնօրեն Գարիկ Սարուխանյանը: Արտադրությանը խոչընդոտող միակ խնդիրը, ըստ տնօրենի, հումքի պակասն է: «Խնդրի կարգավորման համար պետք է զարգացնել անասնապահությունը, ստեղծել կերի կայուն բազա՝ անմշակ հողատարածքները դնելով ցանքի տակ»,- հավելեց գործարարը:

Հատկանշական է, որ՝ ոլորտի առաջատար ընկերությունների հետ միասին, ցուցահանդեսին մասնակցում էին նաև փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներ, ում արտադրանքն արդեն որոշակի տեղ է գրավում երկրի ներքին շուկայում: Կոտայքի մարզի «Չանախ» ընկերությունը ներկայացրել էր 18 անուն կաթնամթերք: «Մեր արտադրության մեջ շուտով՝ որպես նորույթ, կմտնի «Նանե» ացետոֆիլային մածունը, որը դրական ազդեցություն է ունենում աղեստամոքսային համակարգի գործունեության վրա, կանխում է դիզբակտերիոզը, բարձրացնում մարդու ակտիվությունը: Շատ կարևոր սննդամթերք է: Արտադրելու ենք նաև զովացուցիչ ացետոֆիլային թան: Ի դեպ, թողարկում ենք նաև «Հայկական կեֆիր», որը՝ որպես ֆերմենտային կաթնամթերք, դարձյալ դրական ազդեցություն է թողնում մարդու առողջության վրա»,- ասաց ընկերության տնօրեն Ղուկաս Բունիաթյանը: «ArmProd EXPO» ցուցահանդեսը բացառիկ հնարավորություն է ընձեռում հանգամանորեն ցուցադրել սննդամթերքի ողջ տեսականին, լիարժեք ուսումնասիրել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ Հայաստանում և ողջ տարածաշրջանում գործող ֆիրմաների, կազմակերպությունների և ապրանքանիշերի մասին: «Դուստր Մելանյա» ՍՊԸ-ն ցուցադրման էր ներկայացրել 17 տեսակի կաթնամթերք, որից՝ 10-ը բաժին էր ընկնում պանիրներին: Տարվա նորույթն, ըստ արտադրության պետ Ասատուր Հարությունյանի, ընկերության հեղինակային «Ալաշկերտ» (փոքր) և «Լալվար» պանրատեսակներն էին: «Այժմ ձեռնարկությունում կատարվում են համեմունքային պանրի փորձարկումները, որը, հավանաբար, հաջորդ տարվանից դուրս կգա սպառման լայն շուկա»,- ասաց պրն. Հարությունյանը: Ցուցահանդեսը հնարավորություն է ընձեռում ստանալ գործնական տեղեկատվություններ ու կանխատեսումներ՝ շուկայի զարգացման մասին, գտնել շահավետ գործընկերներ կամ օտարերկրյա ներդրողներ: «ArmProd EXPO» ցուցահանդեսը նպաստում է նաև սննդի ցանցերի մատակարարների հետ՝ արտադրողների, դիստրիբյուտորների, բիզնես-խորհրդատուների, սպառողական շուկայի հետազոտողների անմիջական բանակցություններին: «Ամասիայի գլխավորող պանրագործարանը» ներկայացրել էր Ալպիական գոտում արտադրված կաթից պատրաստված 17 անուն կաթնամթերք՝ հիմնականում պանրի տեսակներ: Ընկերության կոմերցիոն տնօրեն Մկրտիչ Անուշյանի տեղեկացմամբ, դրանցից ամենաճանաչվածները՝ «Ամասիա» և «Էլիանոր» աղաջրային յուրօրինակ պանրատեսակներն են: Նրա կարծիքով՝ շուկայում, ելնելով սեզոնից, ավելի շատ սպառվում են ապխտած պանրատեսակները:

Ի դեպ, ապխտման նպատակով օգտագործվում են բնական նյութեր, ինչը դրական ազդեցություն է թողնում համային հատկանիշների վրա: «Ձմռան ամիսներին առավել լայն սպառում ունեն «Լոռի» և «Չանախ» պանրատեսակները»,- հավելեց պրն Անուշյանը:

«ArmProd EXPO» ցուցահանդեսն ամբողջությամբ ընդգրկում էր Հայաստանի սննդի շուկան և հատվածավորվում թեմատիկ բաժինների՝ համախմբելով սննդամթերքի արտադրության և վերամշակման գրեթե բոլոր ոլորտները խոշորագույն սննդի ցուցահանդեսում՝ արտացոլելով ներքին և արտաքին ագրոբիզնեսի զարգացման հիմնական միտումները:

Ցուցահանդեսը միաժամանակ նպաստում է բարձրորակ սննդամթերքի իրացմանը, կոմերցիոն արդյունավետությանը և ժամանակակից փոփոխվող շուկային համապատասխանող նոր մոտեցումների ու գործնական լուծումների հայտնաբերմանը:

Նելլի Սահակյան

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերջերս «Կանաչ արահետ» ՀԿ-ն Թբիլիսիում մասնակցեց Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Հարավային Կովկասում կլիմայի փոփոխությանը հարմարվելու և կենսաբազմազանությունը պահպանելու համար անհրաժեշտ տեղական հնարավորությունների և տարածաշրջանային համագործակցության զարգացում» տարածաշրջանային ծրագրի եզրափակիչ համաժողովին, որը կազմակերպել էր «Մերսի Քորփս» միջազգային հասարակական կազմակերպությունը և Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցը (CENN): Համաժողովի նպատակն էր՝ ներկայացնել ծրագրի արդյունքները և քննարկել Հարավային Կովկասի երկրների միջև հետագա համագործակցության ուղղությունները՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության անդրսահմանային պլանավորման համար: Միջոցառմանը ներկա էին մի շարք շահագրգիռ կողմեր Վրաստանի կառավարությունից և տեղական ինքնակառավարման մարմիններից, ներկայացուցիչներ միջազգային և հարավկովկասյան երկրների կազմակերպություններից:

Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցի ներկայացուցիչ Նինո Խելաձեն մեկնաբանեց կլիմայի փոփոխության հարմարվողականության անդրսահմանային պլանները: «Կանաչ արահետ» ՀԿ ներկայացուցիչ Լիա Ասատրյանը ներկայացրեց իրականացված ծրագրային գործողությունները Հայաստանում: ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչ Միլենա Հարությունյանը ներկայացրեց կլիմայի փոփոխության և հարմարվողականության հնարավոր միջոցառումների վերաբերյալ: Կլիմայի փոփոխության խնդիրների իրավիճակը Հայաստանում և տարածաշրջանային համագործակցության հնարավոր մոտեցումները ներկայացրեց Հայաստանում UNFCCC ազգային համակարգող Արամ Գաբրիելյանը: Համաժողովին ներկա էր «Մերսի Քորփս» կազմակերպության կլիմայի փոփոխության խորհրդատու Էլիոթ Լևինը (ԱՄՆ, Փորթլանդ), ով ներկայացրեց կրկնապատկման (ռեպլիկացիայի) ռազմավարությունը և ծրագրից քաղված դասերը: Եղան մի շարք այլ զեկուցումներ և քննարկումներ: Համաժողովի ընթացքում CENN կազմակերպության տնօրեն Նանա Ջանաշիան ընդգծեց նմանատիպ տարածաշրջանային ծրագրերի կարևորությունը՝ շրջակա միջավայրի մարտահրավերներին առավել արդյունավետ դիմակայելու և էկոհամակարգը պահպանելու համար:

Նունե Սարուխանյան
«Կանաչ արահետ» ՀԿ

1 ՀԱՅԱԳՐՈՖՈՐՈՒՄ

ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԴՐԱԿԱՆ

Միջին տվյալներով գյուղատնտեսությունում ձևավորվել է երկրի համախառն ներքին արդյունքի շուրջ 1/5 մասը, իսկ գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերության հետ մեկտեղ համախառն ներքին արդյունքի մեջ ագրոպարենային ոլորտի մասնաբաժինը կազմում է շուրջ 25 %: Նշվածի հետ մեկտեղ, ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ: Գյուղատնտեսական արտադրությունում արդյունավետ

տնտեսավարմանը դեռևս լրջորեն խոչընդոտում են գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը: Ստեղծված իրավիճակում, չնայած որոշ դրական քայլերի, դանդաղ են ընթանում տնտեսությունների խոշորացման, կոոպերացման, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեության խթանման գործընթացները: Խնդիրներ կան՝ կապված գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման, սերմնաբուծության համակարգի բարելավման, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացման, տոհմային գործի կազմակերպման, մասնավորապես՝ արհեստական սերմնավորման գործընթացում արդյունավետ մեխանիզմների կիրառման և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հետ: 2010 թվականից հետո ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտի կարևոր ձեռքբերումներից էր՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կրճատման բացասական երևույթի կասեցումը: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսությունում տնտեսավարողների ջանքերով և ոլորտում իրականացված մի շարք պետական աջակցության ծրագրերի իրականացման արդյունքում, 2011-2014 թվականներին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են 49.1 հազ. հեկտարով: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2014 թվականին կազմել է 74.2 %, 2010 թվականի 63.2 %-ի դիմաց: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակով հանրապետությունում առաջատար է ՀՀ Գեղարքունիքի մարզը, որտեղ 2014 թվականին այդ ցուցանիշը կազմել է 90.3 %, իսկ ամենացածր ցուցանիշը՝ 28.9 %, առկա է Վայոց ձորի մարզում:

2014 թվականին ցանքատարածությունների համեմատաբար բարձր աճ գրանցվեց ՀՀ Արմավիրի (8.3 %), Արագածոտնի (7.5 %), Արարատի (6.6 %) մարզերում: Ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 482.9 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 4.9 %-ով: Ընթացիկ տարում գյուղատնտեսության տնտեսական աճի վրա որոշակի բացասական ազդեցություն ունեցավ 2014 թվականի մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած ցրտահարությունը:

Ցրտահարության հետևանքների մեղմման ուղղությամբ կառավարության կողմից իրականացված մի շարք հրատապ միջոցառումների, մասնավորապես՝ տուժած տնտեսություններին անհատույց մատակարարված սերմացուների, մատչելի պայմաններով դիզելային վառելանյութի և պարարտանյութերի տրամադրման, վնասված բազմամյա տնկարկների վերականգնման ուղղությամբ իրականացված խորհրդատվության, ոռոգման ջրի վարձի, հողի հարկի զիջման արդյունքում՝ հնարավոր եղավ որոշակիորեն կրճատել կորուստների չափը: Բուսաբուծության ճյուղի կայունությանն ու տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ստեղծմանն են՝ ուղղվել մի շարք պետական աջակցության ծրագրեր, որոնցից հիմնականներն են՝

- «2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման»,
- «2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման»,
- «Բույսերի պաշտպանության միջոցառումների»,
- «Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման» և այլ ծրագրեր:

Նախարարության ընթացիկ տարվա կարևորագույն խնդիրներից է եղել Արարատյան հարթավայրում և նախալեռնային գոտում մորմազգի մշակաբույսերի ցեցի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների կազմակերպումը: ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում իրականացվել են կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց վնասատուների մոնիթորինգի աշխատանքներ: Վերջիններիս արդյունքների հիման վրա, համայնքներում տարվել են խորհրդատվական աշխատանքներ՝ վնասատուի դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու նպատակով: Տրամադրված խորհրդատվության արդյունքում՝ հողօգտագործողների կողմից իրականացված պայքարի համալիր միջոցառումների շնորհիվ, զգալիորեն նվազել է վնասատուների կողմից բերքին հասցված վնասը, ավելացել են արտադրության ծավալները: Մասնագետների կողմից դիտարկումները և խորհրդատվության տրամադրումը շարունակվում է:

Ընդհանուր առմամբ, ըստ օպերատիվ տվյալների, հանրապետությունում հավաքվել է ավելի քան 591 հազ. տոննա հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի համախառն բերք, այդ թվում՝ շուրջ 340 հազ. տոննա ցորենի: Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության ծավալները գերազանցում են նախորդ տարվա մակարդակը 7.7 %-ով, այդ թվում՝ ցորենինը՝ 9.1 %-ով:

Հանրապետությունում, օպերատիվ տվյալներով, ցորենի միջին բերքատվությունը կազմում է շուրջ 32 գ/հա, նախորդ տարվա 31.3 գ/հա դիմաց: Ըստ օպերատիվ տվյալների, սպասվում է շուրջ 720.0 հազ. տոննա կարտոֆիլի, 947.0 հազ. տոննա բանջարեղենի, 259.0 հազ. տոննա խաղողի համախառն բերք, որոնք էականորեն գերազանցում են նախորդ տարվա մակարդակը: Խաղողի բարձր բերք են ապահովել հատկապես՝ Արմավիրի և Արարատի մարզերը: Կանխատեսվում է շուրջ 302.0 հազ. տոննա պտղի և հատապտղի համախառն բերք, որը զիջում է նախորդ տարվա մակարդակը և գլխավորապես հետևանք է աննախադեպ ցրտահարության: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2014 թվականի հունվար-օգոստոս ամիսներին բուսաբուծության համախառն արտադրանքը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 4.2 %-ով: 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատությամբ, տավարի գլխաքանակն ավելացել է 2.5, այդ թվում կովերինը՝ 2.1 %-ով, մանր եղջերավորներինը՝ 6.3 %-ով:

Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես, «Տավարաբուծության զարգացման ծրագրի» շրջանակներում, հանրապետություն է ներկրվել 1811 գլուխ տոհմային երինջ, այդ թվում՝ 479 գլուխ միայն 2013 թվականին: Ներկրված կենդանիներից ապահովվում է 5-6 հազար կգ միջին կաթնատվություն, իսկ առանձին կենդանիներից տարեկան ստացվում է ավելի քան 10 հազար կգ կաթ: Ծրագրի շրջանակներում ներկրված կենդանիներից տարեկան ստացվում են ավելի քան 1000 գլուխ բարձրարժեք հորթեր և շուրջ 7 հազար տոննա կաթ, որոնց համախառն արժեքը կազմում է 1.85 մլրդ դրամ, ինչն ավելին է, քան՝ 2007-2013 թվականներին գնված կենդանիների ընդհանուր արժեքը: Առաջիկա տարիներին նախատեսվում է ծրագրի շարունակում:

2014 թվականին հանրապետությունից առաջին անգամ արտահանվել են Ծվից, Սիմենթալ և Հոլշտին ցեղերի տոհմային երինջներ, շուրջ 200 գլուխ, բացի այդ, արտահանվել են նաև ավելի քան 3130 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ՝ մսի իրացման նպատակով:

Զգալի առաջընթաց է նկատվում ոչխարաբուծության ոլորտում: Ոչխարների արտահանումը լուրջ խթան է ոլորտի զարգացման համար և այդ նպատակով նախարարությունը հետևողական աշխատանքներ է տանում ոչխարների արտահանման ծավալներն ավելացնելու և ոչխարների մորթի համար նախատեսված ժամանակակից սպանդանոցները շահագործելու ուղղությամբ: Առաջիկայում շահագործման կհանձնվի 5 սպանդանոց: Ներկայումս գործում են 2-ը, որից մեկը՝ հալալ մորթի կազմակերպման համար, ևս նման մեկ սպանդանոց, մոտ ժամանակներս, կգործարկվի Մասիսի տարածաշրջանում: Համաձայն կանխատեսումների, 2014 թվականին հանրապետությունում կարտադրվի ավելի քան 166 հազար տոննա միս (կենդանի զանգվածով), 728 հազար տոննա կաթ և 715 մլն ձու: 2013 թ.-ի համեմատությամբ մսի իրացման ծավալները կավելանան ավելի քան 12.4 %-ով կամ 18.2 հազ. տոննայով, կաթինը՝ 9.3 %-ով կամ 61 հազար տոննայով, ձվինը՝ 4.8 %-ով կամ 17 մլն հատով:

Ներկայումս գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտին բաժին է ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի շուրջ 35.0 %-ը: 2013թ. տվյալներով՝ ոլորտի համախառն արտադրանքը կազմել է 438.5 մլրդ դրամ: 2014թ. հունվար-օգոստոսի տվյալներով՝ ագրովերամշակող ոլորտի համախառն արտադրանքը կազմել է 304.4 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 8.2 %-ով:

Հանրապետությունում գործում են վերագործարկված կամ նոր ստեղծված պահածոների՝ շուրջ 35, գինեգործական՝ 45, կաթնամթերքի և մսամթերքի շուրջ 70 ընկերություն: Նախապատրաստական աշխատանքների շնորհիվ, մինչև ընթացիկ տարվա մթերումներն սկսելը, գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է շուրջ 12.0 հազ. պայմանագիր, որի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել են 112.5 մլն. դրամ կանխավճար և 675.1 մլն. դրամի բուժանյութ, պարարտանյութ և այլ օժանդակություն, նախորդ տարվա՝ 9.3 հազ. պայմանագրի, 78.0 մլն դրամ կանխավճարի և 250.5 մլն դրամ այլ օժանդակության դիմաց: 2014թ. հոկտեմբերի 17-ի դրությամբ, հանրապետության պտուղբանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 43.9 հազ. տոննա պտուղբանջարեղեն, որից՝ 32.3 հազ. տոննա բանջարեղեն և 11.6 հազ. տոննա պտուղ: Նշված ժամանակահատվածում մթերվել է 182.2 հազ. տոննա խաղող, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 161.3 հազ. տոննայի դիմաց: 2014 թվականի հոկեմբերի 17-ի դրությամբ,

Ագրոլրատու
Հոկտեմբեր 15 - 28, 2014 թ.
թիվ 27 (2049)

ՄԻՏՈՒՄՆԵՐ

հանրապետությունից արտահանվել է 37.9 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, որից՝ 5.0 հազ. տոննա խաղող, 2.9 հազ. տոննա դեղձ, 20.0 հազ. տոննա կարտոֆիլ: Արտահանման գործընթացը շարունակվում է:

Գյուղատնտեսական մթերքների և այլ պարենային ապրանքների արտահանումը մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնություն խթանելու նպատակով՝ նախարարության կողմից մշակվել է գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների 2014-2017 թթ. արտահանման խթանման ծրագրի նախագիծը, որը ներառում է նաև տեղական արտադրության ընդլայնմանն ուղղված միջոցառումներ: Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը նպաստավոր պայմաններ կստեղծի գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտահանման ծավալների ավելացման համար, որը կարևոր նախադրյալ է տեղական արտադրության ծավալների աճի, ագրոտեխնիկայի կատարելագործման, նոր տեխնոլոգիաների ներդրման, արտաքին ներդրումների ավելացման ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացման համար: Ընթացիկ տարվա հունիսի 8-ից վերսկսվել են Երևան քաղաքի Կասյան փողոցում գործող գյուղատնտեսական մթերքների տոնավաճառի աշխատանքները, իսկ օգոստոսի 2-ին «Կենտրոն» վարչական շրջանում բացվել է երկրորդ տոնավաճառը: Հայկական ընկերություններն իրազեկվել են արտերկրում կազմակերպվող ագրոպարենային ոլորտի մի շարք ցուցահանդեսների և տոնավաճառների, մասնավորապես՝ Մոսկվայում 2014 թվականի հոկտեմբերի 8-11-ը կայացած «Ոսկե աշուն-2014» և Երևանում 2014 թվականի հոկտեմբերի 17-19-ը ներկայումս ընթացող «Արմպրոդէքսպո-2014» միջազգային ցուցահանդեսների մասին: «Հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրերն իրականացվում են սկսած 2011թ.-ից: Վերջիններիս շրջանակներում ձեռք է բերվել 33822 տոննա ազոտական, 2645 տոննա ֆոսֆորական և 1619 տոննա կալիումական պարարտանյութեր: Ընդ որում, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը վերջին տարիներին ներկրվում են առաջին անգամ: Պարարտանյութերը վաճառվում են շուկայականից 40-50 % ցածր գներով: Ծրագրով հանրապետության հողօգտագործողներին գյուղական համայնքներում տրամադրվում է 17 միլիոն 640 հազար լիտր դիզելային վառելանյութ, 1 լիտրը՝ 350 դրամ՝ շուկայականից 25-26 %-ով ցածր գնով, ներառյալ տեղափոխման ծախսերը: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 3 միլիարդ 90 միլիոն դրամ սուբսիդիա: 2011թ. ապրիլից մինչև 2014 թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում տրամադրվել է 62.1 մլրդ դրամի շուրջ 70.7 հազ. վարկ, սուբսիդավորման գումարը նշված ժամանակահատվածում կազմել է 1.89 մլրդ դրամ: 2014թ. հունվար-հունիս ամիսներին տրամադրվել է 7.449 մլրդ դրամի 7.7 հազ. վարկ, սուբսիդավորման գումարը կազմել է 362.6 մլն դրամ: Ծրագիրը շարունակվում է, և աշնան գյուղատնտեսական աշխատանքների համար ներկայումս բանկերը սկսել են վարկերի տրամադրումը:

Ընթացիկ տարում շարունակվել են գյուղատնտեսական կոոպերացիայի խթանման միջոցառումների իրականացումը: Մշակվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում, հանրապետության 6 մարզերում ստեղծվել են 90 արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ:

Վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն արտասահմանյան երկրների համապատասխան նախարարությունների հետ կնքել է գյուղատնտեսության բնագավառում համագործակցության 10 համաձայնագիր՝ հասցնելով դրանց թիվը շուրջ 35-ի: Նախարարությանն իրենց մշտական աջակցությունն են ցուցաբերել հանրապետության գյուղատնտեսությունում ընդլայնված գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններ, դրանցից հարկ եմ համարում առանձնացնել Ֆերմերների ազգային միավորումը, Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա իրավաբանական անձանց միությունը:

Գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքների հետ մեկտեղ, առավել շատ են խնդիրները: Շարունակվելու է առանձնակի ուշադրությունը գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, մասնավորապես՝ հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործմանը, ցանքաքատարածությունների ավելացմանը: Առաջնահերթ խնդիր է մնում երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը: Առաջիկա խնդիրների մեջ առանձնանում է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանումը: Առաջնահերթ խնդիրներից է լինելու գյուղատնտեսական մշակաբույսերի, հատկապես՝ հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի զարգացումը, վերջինիս արդյունքում՝ բարձրորակ սերմերով հանրապետության ապահովվածության մակարդակի բարձրացումը: Կարևոր է համարվում անասնաբուծության տոհմային գործի կազմակերպումը, մասնավորապես՝ գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավումը, արհեստական սերմնավորման գործընթացում արդյունավետ մեխանիզմների և տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև՝ անասնաբուժական համակարգի կատարելագործումը: Կարևորվում է նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծումը և քայլերի ձեռնարկումը: Բնական աղետների, մասնավորապես՝ կարկտահարության վնասների բացառման համար հրատապ է համարվում կարկտապաշտպան ցանցաշերտերի կիրառման տեխնոլոգիաների ներդրումը: Ջրապահովվածության մակարդակի բարձրացման, ոռոգման ջրի խնայողության համար անհրաժեշտ է ներտնտեսային ցանցերում կաթիլային ոռոգման տեխնոլոգիաների ներդրումը: Կարևորվում են նաև գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի համալրման խնդիրները, որոնց լուծմանը կուղղվեն գյուղատնտեսությունը տեխնիկական միջոցներով ապահովելու տարբեր մատչելի մեխանիզմներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության և անձամբ իր անունից ողջունելով և շնորհավորելով ներկաներին՝ Գյուղատնտեսության աշխատողի օրվա կապակցությամբ՝ Հովիկ Աբրահամյանը նշել է, որ ՀՀ կառավարության ծրագրի հիմնական ուղղություններից է գյուղատնտեսության արդիականացումը, որը ռազմավարական նշանակություն ունի մեր երկրի տնտեսության համընդհանուր զարգացման համատեքստում: «Պատմության տարբեր ժամանակաշրջաններում գյուղն ու հողն առանցքային դեր են խաղացել մեր ժողովրդի կյանքում և շարունակում են նշանակալի դեր խաղալ մեր հասարակության բարեկեցության ապահովման գործում: Որքան էլ ժամանակակից տեխնոլոգիաներն առաջնային նշանակություն ստանան տնտեսության տարբեր ոլորտներում, միևնույնն է, հողի նկատմամբ սերը, մարդկային ջերմությունն ու հոգատարությունն են, որ ապահովում են ավելի որակյալ ու բնական գյուղատնտեսական արտադրանք»,- ասել է վարչապետը:

Կառավարության ղեկավարի խոսքով՝ Հայաստանում բարենպաստ պայմաններ են ստեղծված գյուղատնտեսության զարգացման համար: Հովիկ Աբրահամյանն ընդգծել է, որ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցությունը նոր հորիզոններ է բացում գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների մեծացման համար: Այս համատեքստում վարչապետն անհրաժեշտ է համարել ազգային գյուղատնտեսական շուկայի ենթակառուցվածքների շուտափույթ արդիականացումը, միջազգային չափորոշիչներին համապատասխան ապրանքատեսակների որակի ապահովումը: «Ծանոթ լինելով գյուղացու հոգսերին և խնդիրներին և գիտակցելով մրցունակ գյուղատնտեսության դերը երկրի առաջընթացի գործում՝ ՀՀ կառավարությունը հետևողական քայլեր է ձեռնարկելու գյուղական վայրերի սոցիալական խնդիրների լուծման և գյուղատնտեսական ոլորտի արդիականացման ուղղությամբ: Վերջին տարիների ընթացքում երկրի ագրոարդյունաբերական համալիրն առաջատար դիրք է զբաղեցնում մեր ազգային տնտեսությունում:

Նոր թափ է ստանում գյուղական վայրերի սոցիալական նշանակության ենթակառուցվածքների զարգացման գործընթացը, կառուցվում են կարևոր օբյեկտներ: Վստահ եմ, որ աստիճանաբար բարելավվելու է նաև կյանքի մակարդակը:

ՀՀ կառավարության մոտեցումն այն է, որ ագրարային ոլորտում լուրջ ռազմավարական բարեփոխումները պետք է ապահովեն առավել բարենպաստ պայմաններ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի զարգացման համար»,- նշել է Հովիկ Աբրահամյանը: Վարչապետի դիտարկմամբ՝ գյուղատնտեսությունն էական ազդեցություն ունի երկրի ամբողջ տնտեսության զարգացման վրա և կառավարությունը շարունակելու է պետական աջակցություն ցուցաբերել ոլորտի զարգացմանը, իսկ ագրարային քաղաքականությունն ուղղված է լինելու աշխատանքային անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Հովիկ Աբրահամյանը ցուցահանդեսին մասնակից փոքր և միջին ձեռնարկատիրության ներկայացուցիչներին վստահեցրել է, որ կառավարությունը նրանց կողքին է ու պատրաստակամ է աջակցելու ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված յուրաքանչյուր նախաձեռնության:

Գյուղատնտեսության բնագավառում ներդրած ավանդի և գյուղատնտեսության աշխատողի օրվա կապակցությամբ, Հովիկ Աբրահամյանը ՀՀ վարչապետի հուշամեդալով է պարգևատրել և շնորհակալագրով խրախուսել ոլորտի մի խումբ ներկայացուցիչների: Վարչապետ Աբրահամյանը ՀՀ գյուղատնտեսության նախարարի հետ շրջել է նաև «Արմպրոդէքսպո» ցուցահանդեսին մասնակից ագրոպարենային ոլորտը ներկայացնող ընկերությունների տաղավարներով, ծանոթացել նրանց արտադրատեսականուն, գործունեությանը և առաջիկա ծրագրերին: Համաժողովում գյուղատնտեսության աշխատողի օրվա կապակցությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար ոսկե մեդալով և նախարարի շնորհակալագրերով պարգևատրվել են ոլորտի մի շարք աշխատողներ:

Իսկ գյուղատնտեսության հիմնախնդիրների լավագույն լուսաբանման և գյուղատնտեսության նախարարության հետ ակտիվ համագործակցման համար շնորհակալագրեր ստացան նաև մի շարք ԶԼՄ-ների լրագրողներ:

Լ.Ծ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

90-ԱՄՅԱ ԹԱՎՇՈՒՏԸ

Վերջերս Շիրակի մարզի Թավշուտ համայնքը մեծ հանդիսությամբ տոնեց հիմնադրման 90-ամյա հոբելյանը: Տոնական միջոցառմանը մասնակցում էին տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Յոլակյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, նաև համայնքապետեր, հյուրեր: Թավշուտ էին եկել նաև գյուղի երբեմնի բնակիչները, ովքեր այժմ բնակվում են աշխարհի տարբեր երկրներում:

Թավշուտը հիմնադրվել է 1924 թվականին, Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից գաղթածների կողմից, այստեղ հիմնականում բնակություն են հաստատել Ալաշկերտից, Մուշից, Սասունից եկած հայ ընտանիքները: Եվ քանի որ գյուղի բնակչության մեծ մասի նախնիներն անցել են սարսափելի ջարդերի ճանապարհով, գյուղի հիմնադրման տոնը նվիրված էր Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ևս, ինչն էլ պատճառ էր, որ միջոցառման ընթացքում բարձրացվեցին բոլոր այն երկրների դրոշները, որոնք ճանաչել են հայոց ցեղասպանությունը: Այս կերպ թավշուտցիներն իրենց շնորհակալությունը հայտնեցին առաջադեմ այն երկրներին, որոնք ընդունել են մեր երկրի ու ազգի նկատմամբ իրականացված ոճրագործությունը:

Ողջունելով համայնքի բնակիչներին և շնորհավորելով նրանց գյուղի հիմնադրման 90-ամյակի կապակցությամբ՝ Շիրակի մարզպետն իր խոսքում նշեց. «Ես ուրախ եմ, որ այստեղ, այս գյուղում հիմա տոն է, հատկապես ոգևորող է այն, որ միջոցառումը համախմբել է բոլոր թավշուտցիներին, ուրախալի է նաև այն փաստը, որ Շիրակի մարզի հեռավոր այս գյուղում ևս հիշում ու խնկարկում են հայոց եղեռնի զոհերի հիշատակը և ձայն են բարձրացնում հանուն պատմական արդարության. թավշուտցիներին առողջություն և բարեկեցություն եմ մաղթում»:

Համայնքի ղեկավար Սուրեն Սարգսյանն էլ ուրախությամբ փաստեց, որ չնայած առկա խնդիրներին, գյուղում ձեռքբերումներն էլ քիչ չեն, Թավշուտն այն համայնքներից է, որտեղ հայկական ավանդույթներն ու սովորույթները միշտ առաջնային են եղել, ինչի վառ ապացույցն էր՝ հյուրերին հայկական ավանդական ուտեստներ մատուցելը: Չնայած ցուրտ եղանակին՝ Թավշուտում թևածում էր ուրախ երգն ու պարը:

«ԳՅՈՒՂՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԶԱՐԳԱՑՆԵԼ...»

Տավուշի մարզի Հաղարծին գյուղի (Դիլիջանի տարածաշրջան) 192 հա խոտհարքները և 1500 հա արոտները լիովին բավարարում են առկա գլխաքանակին (1300 գլուխ խոշոր, 400 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 200 ձի, 650 գլուխ խոզ), սակայն ընթացիկ տարվա երաշտի հետևանքով, խոտհարքները ժամանակից շուտ չորացան, իսկ բնակչությունն էլ խոտի անհրաժեշտ քանակությունն ապահովեց Գեղարքունիքի մարզից:

«Գյուղի ազգաբնակչության ապրուստի միակ միջոցը և զբաղվածությունը անասնապահությունն է, քանի որ այլ աշխատատեղեր չկան: Յուրաքանչյուր ընտանիք 1-2 կով է խնամում, մոտ 15 ընտանիք ունի 5-6 կով, չկա կաթի զանգվածային արտադրություն, իսկ մսի իրացումը՝ հիմնախնդիր է»,- ասում է գյուղապետ Սարգիս Պողոսյանը:

Գյուղացիները զբաղվում են խոզաբուծությամբ, վերջինիս զարգացման համար առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները: Կենդանիներն, ազատ պահվածքի դեպքում, սնվում են նաև անտառային պտուղներով, ինչի արդյունքում զգալիորեն իջնում էր արտադրվող մսի ինքնարժեքը, փոքրանում տնտեսությունների զարգացման համար ներդրվող ծախսերը: «Ներկայումս այս ճյուղով զբաղվելը դարձել է ռիսկային (նախկինում առկա գլխաքանակը գերազանցում էր 2000-ը)»,- նշեց գյուղապետը:

Տարին բարեհաջող էր պտղի արտադրության առումով, մշակվել է նաև կարտոֆիլ, եգիպտացորեն: Գյուղապետ Սարգիս Պողոսյանի կարծիքով՝ առկա քանակությունը կբավարարի բնակչության պահանջարկը: Բնակիչների թվի առումով, Հաղարծինը մարզի 3-րդ գյուղն է, 4003 բնակչից ավելի քան 400-ը երկարատև բացակայողներ են, մեկնել են արտագնա աշխատանքի: «Ցանկալի է, որպեսզի արտասահմանյան ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում, մեր գյուղում ստեղծվեին ժամանակակից փոքր արտադրամասեր՝ տրիկոտաժի ֆաբրիկա, ադամանդի և գյուղատնտեսական հումքի վերամշակման գործարաներ, կառուցվեին ջերմատներ, որպեսզի բնակչությունը մշտական զբաղվածություն և եկամտի աղբյուր ունենար:

Գյուղում առկա է 137 հա վարելահող, որից՝ 38 հա-ն սեփականաշնորհված է: Վառելահողերի փոքր մասն է մշակվում, քանի որ անջրդի հողատարածքների կարգը բավականին ցածր է (5-րդ կարգ), դրանց շահագործումն անարդյունավետ է»,- հավելեց գյուղապետը: Նրա գնահատմամբ բնակչության կենսամակարդակը բավականին ցածր է: Պետական կառույցներում աշխատանքով ապահովված է ընդամենը 250 ընտանիք: Գյուղի 200 ընտանիք էլ (հիմնականում երիտասարդ) նպաստառու են: Համայնքի ամենամեծ հիմնախնդիրը, ըստ գյուղապետի, գործազրկությունն է: «Տարիներ շարունակ մեր բնակիչներն աշխատել են Դիլիջանի գործարաններում, շինարարական օբյեկտներում: Հիմա աշխատատեղեր չկան, և արհեստականորեն առաջացել է գործազրկություն:

Չնայած դժվարություններին, այնուամենայնիվ, արվում է հնարավորը, որպեսզի հաղարծինցին գյուղում մնա, չհեռանա, չհամալրի օտար ափերում դեգերող իր հայրենակիցների շարքերը: Հաղարծինում գործում է դպրոց, մանկապարտեզ, երաժշտական դպրոց և մշակույթի տուն: Այնուամենայնիվ, ըստ Սարգիս Պողոսյանի, գյուղում պետք է զարգացնել գյուղատնտեսությունը», - նշում է համայնքի ղեկավարը:

Գյուղում կառուցվել է 300 տոննա տարողությամբ ջրամբար, անցկացվել են խմելու ջրի նոր ջրատարներ: Նոր ծրագրերի են սպասում...

Նելլի Սահակյան

ՏԱՎՈՒՇ

² ð ¸Úà ôÜ ² ì º î ¸ ² êÀÜÂ ² ò

Տավուշի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի մասնագետների և խորհրդատուների համար միշտ էլ պահանջված են գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի կողմից կազմակերպված դասընթացները, որոնք առանձնանում են թե՛ իրենց մասնագիտական և թե՛ բարձր որակական հատկանիշներով:

Օրերս հերթական ուսուցողական դասընթացներից մեկն էր: Մասնակցում էին ԳԱՀԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արշալույս Հայրապետյանը, սննդի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնից՝ կենսաբանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանից՝ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Արմենակ Տեր-Գրիգորյանը, նույն համալսարանից անասնաբուժական գիտությունների դոկտոր Հովհաննես Նաղաշյանը:

Դասընթացների թեմաները բավականին բազմաբովանդակ էին. այն է՝ «Գյուղատնտեսական կենդանիների արյան ինվազիոն հիվանդությունները» (Հ.Նաղաշյան) «Խաղողի վազի, կորիզավոր և հնդավոր պտղատեսակների հիմնական հիվանդությունները» (Ա.Գրիգորյան), «Կարտոֆիլի և լոլիկի ցեցերի նմանություններն ու տարբերությունն՝ ըստ կենսաբանական առանձնահատկությունների» (Ա. Տեր-Գրիգորյան):

ԳԱՄԿ-ի խորհրդատուներն իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին ուսուցանողներին՝ ստանալով լիարժեք պատասխաններ, նաև չմոռանալով իրենց բաժանված գնահատման թերթիկների վերջին տողում, առաջարկությունների բաժնում ավելացնել՝ «Նման դասընթացների անցկացումն ավելի հաճախակի դարձնել» արտահայտությունը, քանի որ ֆերմերներին այսօր, քան՝ երբևէ, անհրաժեշտ են գյուղատնտեսական գիտելիքներ:

ԳԱՄԿ-ի տնօրեն Վահան Կարապետյանն էլ հորդորեց խորհրդատուներին՝ ստացած գիտելիքները պատշաճ ձևով փոխանցել իրենց կողմից սպասարկվող համայնքների ֆերմերներին:

Տ. Նազինյան

Ագրոլրատու
Հոկտեմբեր 15 - 28, 2014 թ.
թիվ 27 (2049)

Համայնքային

Կարևորն աշխատանքն է

Միեր Թարխանյանի տնտեսությունը երկու տասնյակի հասնող մեղվափեթակներ են, մի քանի խոշոր եղջերավոր անասուն և 500 քառակուսի մետր տարածքով ջերմոց, որտեղ հիմնականում մշակվում են լոլիկ և վարունգ: Դեռ տարիներ առաջ հայրը գյուղից դուրս 2 հազար քառակուսի մետր ջերմոցային տնտեսություն ուներ, որտեղից ստացվող բերքը ոչ միայն հայրենի Հարժիս գյուղում էր իրացվում, այլև՝ Գորիս քաղաքում և այլ համայնքներում: «Օրնիբուն ընտանիքով աշխատում էինք ջերմոցում, բայց ամենից շատ ամուսինս էր զբաղվում: Նա անգիր գիտեր ամեն թուփը, տերևը. նրա մահից հետո որոշ ժամանակ չէինք կարողանում մշակել, քանի որ գյուղից հեռու էր, հաճախ բերքը գողանում էին: Մի օր էլ տղաս հայտարարեց, որ ջերմոցը տեղափոխում է մեր այգի. շատ չարչարվեց, եռակցման ամբողջ աշխատանքն իր ձեռքով է արել, քիչ ու միչ էլ ապակիները նախորդ ջերմոցից տեղափոխեցինք և, վերջապես, այս տարվա գարնանը կարողացանք վարունգի, լոլիկի սածիլներ տնկել»,- զրույցին խառնվում է Միերի մայրը՝ տիկին Վիկտորիան: Մոր խոսքերը շարունակում է որդին՝ նշելով, որ այս տարի դեռևս չեն կարողացել լիարժեք բերք ստանալ, քանի որ մի կողմից կիսատ գործեր կային, որոնք ավարտին հասցրին անգամ բերքի հասունացման շրջանում, մյուս կողմից էլ՝ շոգի պատճառով:

«Մոտ երկու տոննա բերք հավաքեցի, չնայած ավելին էի սպասում, բայց հաշվի առնելով, որ դեռ նոր ենք սկսել, չեմ դժգոհում, ուղղակի վարկեր եմ վերցրել, և դրանք մարելու համար ստացված եկամուտը բավարար չի լինի, ստիպված եմ անասուն մորթել»,- ասում է երիտասարդ ֆերմերը: Նրա խոսքով տարին բարենպաստ չէր նաև մեղվաբուծության համար, ուստի այս տարի ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրը անասնապահությունն ու ցորենի մշակությունը կլինեն:

«Ցածր բերքը կամ բնակլիմայական պայմանները, միևնույն է, չեն կարող իմ կարծիքը փոխել, որ գյուղատնտեսությամբ հնարավոր չէ բարեկեցություն ապահովել»,- ասում է Միերը և համոզված տոնով շարունակում, որ շատ հնարավորություններ է ունեցել ՌԴ տեղափոխվելու համար, սակայն նախընտրում է դժվարությունները հաղթահարել հայրենի գյուղում: Միերի հետ համակարծիք է նաև նրա ընկերը, ով եկել էր տեղեկանալու ինքնաշեն ջեռուցման սարքի պատրաստման աշխատանքների մասին: «Գյուղում գազ չկա, ասում են՝ մեծ ծախսեր են պետք, չնայած գազամուղը կառուցել են, բայց ներտնտեսային ցանցի համար դեռևս միջոցներ չկան, դրա համար իմ ձեռքով ջերմոցի համար վառարան եմ սարքում, որ ձմռանը փայտով, աթարով կարողանամ ջեռուցել ու կանաչեղեն մշակել, պահանջարկը մեծ է»,- ասում է Միերը: Միերի կինը ևս նախընտրում է աջակցել ամուսնուն՝ իրագործելու ջերմոցային տնտեսությունն ընդլայնելու մտադրությունը:

«Իսկապես, որոշել եմ մեծացնել ջերմոցը, բայց դրանից առաջ անելիքներ շատ կան, ամենից առաջ պիտի կարողանամ կարգավորել ջեռուցման հարցը, ձեռք բերեմ բարձր բերքատու սորտեր, այս տարի կարծես թե այդ խնդրին ուշադրություն չէի դարձրել»,- ասում է Միերը և շարունակում, որ ինքը մասնագիտությամբ տնտեսագետ է, գյուղատնտեսական բավարար գիտելիքներ չունի, այդ պատճառով շատ է կարդում, հաճախակի դիմում է նաև Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի՝ իրենց համայնքը սպասարկող գյուղատնտեսության խորհրդատու Արտաշես Մանվելյանին: Միերը նշում է, որ, վերջինս իրեն օգնել է մշակության ագրոտեխնիկայի հարցերով, նաև նրա խորհրդով արդյունավետ պայքար իրականացրել մշակաբույսերի մոտ նկատվող հիվանդությունների և վնասատուների դեմ, ճշտել ոռոգման նորմաներն ու ժամկետները, իսկ ջերմոցի միկրոկլիմայի կարգավորման նպատակով, կատարել կրով ապակիների սպիտակեցում:

Ս. Շահնազարյան

Ծրագիր

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հոկտեմբերի 13-ը Ապարանի տարածաշրջանի Հարթավան համայնքի համար մեծ տոն էր: Համայնք էին այցելել Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն, Orange հիմնադրամի խորհրդի նախագահ Ֆրենսիս Ժելիբտերը, Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն Հայկ Մինասյանը, հարակից համայնքների ղեկավարներ և հյուրեր: Orange հիմնադրամի աջակցությամբ, Արագածոտնի մարզի Հարթավան գյուղում դեռ գարնանը մեկնարկել էր համայնքային զարգացման նոր ծրագիր: «Մեկ գյուղ» նախաձեռնության հիմնական նպատակն էր աջակցել գյուղական համայնքների համալիր զարգացմանը: Այն, մասնավորապես, ուղղված էր ընտրված մեկ գյուղական համայնքի տնտեսական գործունեության կայուն զարգացմանն ու աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև կրթական ու առողջապահական ենթակառուցվածքների բարելավմանը: Հերթական մեկ գյուղը Արագածոտնի մարզի Հարթավան գյուղն էր: Իսկ «Շեն» բարեգործական կազմակերպությունը կյանքի կոչեց ծրագիրը: «Մեկ գյուղ» ծրագրին Orange հիմնադրամի հատկացրած ֆինանսական աջակցությունը կազմել է 55 միլիոն դրամ:

Ողջույնի խոսքով հանդես եկան Հարթավան համայնքի ղեկավար Ժիրայր Ավետիսյանը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն, «Orange» հիմնադրամի խորհրդի նախագահ Ֆրենսիս Ժելիբտերը, մարզպետ Սարգիս Սահակյանը: Իսկ «Շեն» ՀԿ-ի նախագահ Հայկ Մինասյանը նշեց, որ համայքներում պետք է այնպիսի ծրագրերի իրագործումը, որ ժողովուրդը բարեկեցիկ կյանք ունենա: Իսկ «Հարթավան կաթ» սպառողական կոոպերատիվը կաջակցի համայնքին բնակիչների հոգսը թեթևացնելու համար: Համայնքի ղեկավարն իր խոսքում նշեց. «Կաթի մթերման կետի հիմնումը, որը տարիների երազանք էր, թույլ կտա հարթավանցիներին ունենալ կայուն եկամուտ և չարտագաղթել երկրից»: Օրը նշանավորվեց համայնքային կենտրոնում անասնաբույժի խորհրդատվության սենյակի և վարսավիրանոցի հանդիսավոր բացմամբ:

Orange հիմնադրամի խորհրդի նախագահ Ֆրենսիս Ժելիբտերն ընդգծեց, որ հիմնադրամն ավանդաբար օգնություն է տրամադրել սոցիալական և առողջական խնդիրներ ունեցողներին, և գյուղատնտեսական զարգացմանն ուղղած ծրագրերը համեմատաբար նոր ուղղություն են համայնքի համար: Ֆրենսիս Ժելիբտերը, կարծես, շարունակելով համայնքի ղեկավարի միտքը, շեշտադրում է ծրագրի նշանակությունը. «Կարևոր է սոցիալական խնդիրների լուծումը, բայց շատ ավելի կարևոր է օգնել գյուղացուն ամուր կանգնել սեփական հողի վրա: Գյուղական համայնքներն ու դրանց առօրյա խնդիրները մշտապես Orange հիմնադրամի ուշադրության կենտրոնում են: Մեր գործընկերների հետ համատեղ մենք արդեն իրականացրել ենք գյուղական համայնքների սոցիալական ենթակառուցվածքների սպորտային համալիրների, մանկապարտեզների, համակարգչային սրահների զարգացմանն ուղղված մի շարք արդյունավետ ծրագրեր: Վերջիններիս նպատակն էր խթանել գյուղական համայնքների տնտեսական զարգացման հնարավորությունները: Այս անգամ մենք նախաձեռնել ենք էլ ավելի համապարփակ ծրագիր, որն ուղղված է լինելու Հարթավան գյուղի կաթնարդյունաբերության, ինչպես նաև ոռոգման համակարգի զարգացմանը և սպորտային խաղահրապարակների ու համայնքի բուժկետի տեխնիկական հագեցվածությանը: Ակնկալում ենք, որ մինչև տարեվերջ, «Շեն» բարեգործական կազմակերպության հետ համատեղ իրականացվող այս նախաձեռնությունը դրական ազդեցություն կունենա և կբարելավի համայնքի բնակիչների կյանքի պայմանները»:

«Շեն» բարեգործական կազմակերպության Արագածոտնի մարզային համակարգող Արմեն Տոնոյանը նշեց, որ 4 տարի է, ինչ համակարգում է «Շեն» ՀԿ-ի մարզային աշխատանքները: Մարզի 20 համայնքներում իրականացրել են բազմաթիվ ծրագրեր: Հարթավանում կաթի ընդունման կետը, բնակիչների պահանջով, առաջնային է, քանի որ նրանց հիմնական զբաղմունքն անասնապահությունն է: Ըստ Արմեն Տոնոյանի, «Հարթավան կաթ» սպառողական կոոպերատիվը համագործակցում է «Մարիաննա» և «Աշտարակ կաթ» ընկերությունների հետ: Ծրագրով նախատեսվում է նաև լուծել արոտների բարելավման, ջրարբիացման խնդիրները, վերականգնել ջրամբարը, որը ոռոգման ջրով կապահովի շուրջ 80 հա հողատարածք:

Սպառողական կոոպերատիվի մոդելը Հարթավան գյուղի բնակիչներին թույլ կտա բարելավել կաթնամթերքի արտադրությունն ու վաճառքից ստացված արդյունքները: Նորաստեղծ կոոպերատիվին աջակցելու նպատակով, ստեղծվել է կաթի հավաքագրման և վաճառքի մասնագիտացված ու նորագույն տեխնիկայով զինված կետ: Ծրագրի շրջանակներում ջրաբաշխման համակարգի վերանորոգման և 500 մետր երկարությամբ նոր խողովակաշարի կառուցման միջոցով, կբարելավվի նաև համայնքի ոռոգման համակարգի արդյունավետությունը: Ծրագրի շրջանակներում ֆինանսական միջոցներ են հատկացվել նաև գյուղի մանկապարտեզի վերանորոգմանն ու ընդլայնմանը: Արդյունքն ակնհայտ էր: Երեխաները մեծ ոգևորությամբ և սրտի թրթիռով էին խաղում խաղահրապարակում: Նոր պայմանները հնարավորություն կտան կրկնապատկել մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը: Վերակառուցվել են նաև ֆուտբոլի և վոլեյբոլի խաղահրապարակները: Ծրագիրը նախատեսում է նաև համայնքի բուժկետի նոր սարքավորմամբ համալրումն ու բուժանձնակազմի համար մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակեպումը:

Լիանա Շահնազարյան

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

ԱՐԴԵՆ ՍԵՂԱՆՆԵՐԻՆ...

Մանդարին և թուրինջ

Մանդարինը **ոչ միայն համեղ միրգ է, նաև շատ օգտակար է մեր օրգանիզմի համար: Մանդարինի մեջ C վիտամինի մեծ քանակությունն օգնում է օրգանիզմին պայքարել հարբուխային և վարակիչ հիվանդությունների դեմ:**

Մանդարինը պարունակում է նաև մեծ քանակությամբ վիտամին A, որն անհրաժեշտ է աչքերի լիարժեք աշխատանքի և օրգանիզմի լորձաթաղանթային մասերի համար: Վիտամին A-ն նաև բարենպաստ ազդեցություն է թողնում մաշկի վրա: Այս մրգի մեջ կան նաև B_1, K և D վիտամիններ:

Կիտրոնաթթվի մեծ քանակության պարունակության պատճառով մանդարինի մեջ երբեք նիտրատներ չեն լինում:

Թարմ քամված մանդարինի հյութը կարելի է տալ երեխաներին և հիվանդներին՝ որպես դիետիկ ըմպելիք: Մանդարինի հյութը խորհուրդ են տալիս հատկապես բարձր ջերմության ժամանակ, քանի որ այն հրաշալի օգնում է հաղթահարել ծարավը: Բայց այն խմել կարելի է ու պետք է ոչ միայն հիվանդության ժամանակ, այլ նաև պարբերաբար:

Մանդարինն ունի հակասնկային հատկություն և համարվում է հրաշալի կանխարգելիչ միջոց՝ ճիճուների դեմ պայքարելու համար:

Մանդարինն ու նրա հյութը հակացուցված են միայն այն դեպքում, եթե դուք ունեք ստամոքսաղիքային հիվանդություններ, հեպատիտ, ալերգիա, խոլեցիստիտ և երիկամային հիվանդություններ:

Թուրինջը **միշտ էլ համարվել է առողջության և գեղեցկության միրգ: Այն մշտադալար, ջերմասեր բույս է, աճում է միայն արևադարձային գոտիներում:**

Յուրաքանչյուր ծառը տալիս է 200-300 պտուղ: Հասունանալով դեկտեմբերին՝ թուրինջի պտուղներն իրենց հատկությունները պահպանում են մինչև հուլիս: Օգտակար եւ հրաշալի այս մրգի անվանումը անգլերենից թարգմանաբար նշանակում է «խաղողային միրգ», սակայն իր համային հատկանիշներով թուրինջը ոչ մի ընդհանուր բան չունի խաղողի հետ: Պարզապես ճյուղերի վրա խաղողի նման աճում է ողկույզներով 6-18 հատ: Թուրինջը պոմպելմուսի և նարնջի հիբրիդն է: Առավել օգտակար է կարմիր թուրինջը: Պարունակում է ճարպերն այրող և լյարդի աշխատանքը ակտիվացնող նյութեր: Մեկ հատը պարունակում է C վիտամինի օրական նորման: Սակայն, դրանով չի ավարտվում է թուրինջի յուրահատկությունը: Այս միրգն ընդունակ է վերականգնել ԴՆԹ-ի վնասված հյուսվածքները՝ կանխարգելելով քաղցկեղի մի քանի տեսակների առաջացումը: Նաև՝ լավացնում է սրտի աշխատանքը, պակասեցնում ինչպես խոլեստերինի, այնպես էլ՝ ինսուլինի քանակությունը՝ օրգանիզմին թույլ տալով ավելի շատ էներգիա ստանալ սննդից՝ դրանով նպաստելով նաև նիհարելուն:

«Ճիշտ» ուտելու դեպքում կարելի է խուսափել թուրինջին բնորոշ դառնահամից, թուրինջը պետք է ուտել գդալով նախապես պտուղը հորիզոնական կիսելով: Բանն այն է, որ դառնահամությունը մրգին հաղորդում է միջնորմների թաղանթը: Թուրինջը գրգռում և ակտիվացնում է ախորժակը, նպաստում մարսողությանը, օգնում է արյան ճնշման իջեցմանը, շատ օգնում լյարդի ֆունկցիայի խախտման ժամանակ: Թուրինջ ուտել խորհուրդ են տալիս այն մարդկանց, ովքեր ունեն մտավոր գերծանրաբեռնվածություն, օրգանիզմի իմունային համակարգի թուլացում, տարել են վիրահատություններ, այն նպաստում է կենսագործունեության բարձրացմանը: Թուրինջի պտուղը պարունակում է ջուր, շաքար, թթուներ, եթերային յուղեր, պեկտինային և ներկանյութեր, հանքային աղեր, վիտամին C, B_1, D, P, նարինգինի գլիկոզիդ, որն էլ հենց հաղորդում է դառնահամություն: Կեղևը կազմում է պտղի քաշի 30-40%-ը: Դեղամիջոցների և դիմահարդարման միջոցների արտադրության մեջ օգտագործում են թուրինջի հյութը, միջուկը և կեղևը:

ԾՐԱԳԻՐ

Թայվանական արդի տեխնոլոգիաների կիրառումը

Ներկայումս Տավուշի մարզի 15 համայնքներում ընթանում են ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից հատկացվող դրամաշնորհների՝ «Գյուղական համայնքների բնակչության զբաղվածությունը խթանող ծրագրերի իրականացում» անվանակարգում հաղթող ճանաչված «Կլիմայի փոփոխության պայմաններում՝ բարձրարժեք բանջարեղենի արտադրության գործընթացում, Թայվանական արդի տեխնոլոգիաների կիրառումը որպես տնտեսության հեռանկարային ճյուղի զարգացման խթան՝ գյուղաբնակ բնակչության և երիտասարդների ներգրավմամբ» ծրագրի իրականացման աշխատանքները:

Այն կատարվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի՝ որպես ՀՀ Նախագահի գործընկեր կազմակերպության կողմից՝ «Սուրբ Հեղինե» բարեգործական հասարակական կազմակերպությանը հատկացված դրամաշնորհի շրջանակներում:

Ծրագրի համակարգումը և դասընթացների վարումը իրականացնում է ՀՀ ԳՆ Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի գիտաշխատող, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Կարինե Սառիկյանը: Ծրագրի նպատակն է՝ կլիմայի փոփոխության պայմաններում՝ բարձրարժեք բանջարեղենի արտադրության գործընթացում, Թայվանական արդի տեխնոլոգիաների կիրառման նպատակով, գյուղաբնակ երիտասարդների ներգրավմամբ, բարձրացնել վերջիններիս հանրային իրազեկման մակարդակը և զարգացնել բարձրարժեք բանջարեղենների արտադրության ոլորտը:

Ծրագրի իրականացման գործում լուրջ գործընկեր է Տավուշի ԳԱՄԿ-ը: Թայվանական արդի տեխնոլոգիաներն իրենց մեջ ներառում են բարձրարժեք բանջարեղենի բուժիչ հակաօքսիդենտային հատկություններով և բետտա կարոտինով օժտված նոր սորտերի և հիբրիդների ավանդական և ոչ ավանդական տեսակների օգտագործումը: Կարևորվում է բանջարեղենի սածիլների արտադրության ժամանակակից արտադրամասերի հիմնումը, միջավայրի բիոտիկ և աբիոտիկ գործոններից պաշտպանվելու համար մուլչապատման, տարբեր տեսակի ցցափայտերի և թառմաների օգնությամբ մորմազգի և դդմազգի բանջարեղենի մշակման, հողատարածքների ցանցապատման և բուֆերային գոտիների ստեղծման, քարքարոտ հողատարածություններում՝ բանջարեղենը պարկերի մեջ մշակելու տեխնոլոգիաները: Մասնակիցները ծանոթանում են թայվանական ապակեպատ ջերմատների և թաղանթապատ ջերմոցների առանձնահատկություններին և տեխնոլոգիաների կիրառման եղանակներին: Թայվանական սննդարար և բուժիչ բանջարեղենի արտադրությունը լայնորեն տարածված են աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Ծրագիրն ընթանում է օգոստոսի 1-ից. սահմանամերձ համայնքներում իրականացվել են 10-դասընթաց: Մասնակիցները պատրաստակամություն են հայտնել ստացված գիտելիքները կիրառել և անվճար ստացած բանջարեղենի շուրջ յոթ սորտի տեղական սերմերից ստանալ բարձր բերք: Տավուշի ԳԱՄԿ-ը, որպես ծրագրի աջակցող, հանդես է եկել առաջարկությամբ՝ ծրագիրը շարունակելու և շահառուներին հետագա օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Տ. Նազինյան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 20 դրամ

«Ագրոլրատու»թերթի և
«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ստրաշ» կազմակերպությունները:

ՍԿՍՎԵԼ Է 2015 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երեւան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 122
ստորագրված է տպագրության 26.10.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երեւան, Մամիկոնյանց 39ա